

4. Եօթնօրեայ պահք վերացման սուրբ խաչի տօնէն յառաջ (խաչի պաս):

5. Եօթնօրեայ պահք վերափոխման տօնէն յառաջ (Աստուածածնայ պաս): (Այստեղ մտադիր կ'ընեմ՝ որ վերացման սուրբ խաչի եւ վերափոխման տօներու նախատօնակին՝ երեկոյեան պաշտամունք [ռումաներէն denie կոչուած] կը կատարուին):

6. Եօթնօրեայ պահք Ս. Յակոբայ Մծբնայ տօնէն յառաջ (Ս. Յակոբայ պաս):

7. Եօթնօրեայ պահք՝ սահմանեալ ի Ս. Գր. Լուսաւորչէ ի յիշատակ դարձին Հայոց ի քրիստոնէութիւն, որ կը պահուի «Մաքսաւորաց եւ Փարիսեցոց» շաբթուն մէջ (Առաջաւորաց պաս):

8. Եօթնօրեայ պահք Եղիա մարգարէին տօնէն յառաջ (Եղիական պաս):

9. Եօթնօրեայ պահք ի յիշատակ Երեւման սուրբ խաչի ի լերին Վարագայ ի Հայս, որ կը պահուի Հոկտեմբեր ամսոյն մէջ Երեւման խաչի տօնէն երկու շաբաթ ետքը:

10. Եօթնօրեայ պահք Ս. Գր. Լուսաւորչի տօնէն յառաջ:

11. Եօթնօրեայ պահք, որ Ս. Սարգսի տօնէն յառաջ Փետրուարին (Բարեկենդանի մէջ) կը պահուի (Յիսնակաց պաս):

12. Վերջապէս տասնշաբաթեայ պահք ամբողջ տարւոյն մէջ, բոլոր չորեքշաբթի եւ ուրբաթ օրերն ի միասին հաշուելով¹⁷:

Հայք «Սուրբ Աստուած» երգին կը յաւ-